«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ տնօրինության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ:

Գևորգ Մաչանյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության նախագահ - Գործադիր տնօրեն

28.08.2023թ.

Արկադի Փինաչյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Գործադիր տնօրենի տեղակալ – Ներդրումային դեպարտամենտի տնօրեն

28.08.23թ

Գրիգոր Մովսիսյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Գործադիր տնօրենի տեղակալ – Ռիսկերի կառավարման
և համապատասխանության ապահովման դեպարտամենտի տնօրեն

28.08.23թ

Գրիգոր Հովհաննիսյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Գործադիր տնօրենի տեղակալ – Վարկավորման դեպարտամենտի տնօրեն

28.08.23

Գևորգ Խաչատրյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Գործադիր տնօրենի տեղակալ –
Հաճախորդների սպասարկման դեպարտամենտի տնօրեն

28.08.23

Արա Մակարյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Գործադիր տնօրենի տեղակալ –
Բիզնեսի զարգացման դեպարտամենտի տնօրեն

28.08.23

Անժելա Բարսեղյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Առևտրի ֆինանսավորման և թղթակցային
հարաբերությունների դեպարտամենտի տնօրեն

28.08.2023թ

Սեդրակ Բաղդասարյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Հաշվապահական հաշվառման և
հաշվետվությունների դեպարտամենտի տնօրեն
Գլխավոր հաշվապահ

28.08.2023թ.

Բանկը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում 2004թ. սեպտեմբերի 15-ին որպես փակ բաժնետիրական ընկերություն: «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում 2004թ. հոկտեմբերի 7-ին: Բանկի պետական գրանցման վկայականի համարն է N 0476: 2005թ. փետրվարի 25-ին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին տրամադրվել է բանկային գործունեության թիվ 84 լիցենզիան:

Բանկի ապրանքային նշանն է՝

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ARMSWISSBANK

որը գրանցվել է ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից 25.08.2005թ.:

Բանկի առաքելությունն է. հաճախորդներին մատուցել նորարարական, առաջադեմ և միջազգային շուկաներում ընդունված բանկային ծառայություններ՝ հմուտ և պրոֆեսիոնալ անձնակազմի շնորհիվ ու տրամադրել նրանց մեր ժամանակը և ռեսուրսները՝ հավատարիմ մնալով սոցիալական պատասխանատվության ու կայուն ֆինանսավորման մեր սկզբունքներին:

Բանկի տեսլականն է. բանկային ծառայությունների ու կայուն ֆինանսավորման ճկուն լուծումների միջոցով դառնալ Հայաստանի Հանրապետությունում առաջատար կորպորատիվ և ներդրումային բանկ՝ մեր հաճախորդների համար ֆինանսական շուկայում լինելով լավագույն գործընկեր:

Բանկի բիզնես-փիլիսոփայության հիմնարար արժեքներն են.

- *Պրոֆեսիոնալիզմ,*
- *Գործընկերություն,*
- *Հուսալիություն*
- *Ապահովություն,*
- *Ճկունություն:*

Բանկի գործունեությունը նպատակաուղղված է հետևյալ նպատակների իրականացմանը.

- ձևավորել բավարար շահույթ՝ ապահովելով Բանկի կապիտալի շահութաբերության ցուցանիշի ընդունելի մակարդակ և այդ ցուցանիշով ունենալ ՀՀ բանկային համակարգում առաջատար դիրքեր,
- պահպանել և զարգացնել շուկայում Բանկի դիրքերն այն հիմնական բիզնես-ուղղություններում, որտեղ Բանկը վերջին տարիներին մշտապես զբաղեցրել է առաջատար դիրքեր, մասնավորապես, արժեթղթերի շուկայում ներդրումային գործառնություններով, միջազգային և տեղական շուկաներում ֆակտորինգային գործառնություններով ու բիզնեսի վարկավորման շուկայում առանձին պրոդուկտների ուղղությամբ, որոնք պլանավորվող ժամանակահատվածում ունեն զարգացման մեծ պոտենցիալ,
- բարելավել Բանկի դիրքերն այնպիսի հիմնական բիզնես ուղղություններում, ինչպիսիք են, ՓՄՁ վարկավորում, ԱՖԾ, էներգաարդյունավետության ֆինանսավորում ու այլ ուղղություններ,
- շարունակաբար բարելավել հաճախորդների սպասարկման որակը և

ճկունությունը՝ շարունակելով կիրառել Միջազգային լավագույն փորձը,

- շարունակաբար զարգացնել Բանկի կողմից առաջարկվող պրոդուկտների ռիսկերի կառավարման և անվտանգության համակարգերը,
- մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի և մասնագիտական ներուժի բարձրացման շարունակական բարելավում,
- Բանկի ծառայությունների մատուցման ավտոմատացման և ՏՏ լուծումների ներդրման շարունակական ապահովում:

Ներածական խոսք

2023թ. 1-ին կիսամյակում Հայաստանի Հանրապետությունում գրանցվել են տնտեսական ակտիվության բավական լավ ցուցանիշներ: Այս ընթացքում տնտեսական ակտիվության ցուցանիշը տարեսկզբի համեմատ գրանցել է 11,4% աճ: Ինչպես միշտ, այնպես էլ 2023 թ. հունվարից հունիս ընկած ժամանակահատվածում ներմուծումը, թեև քիչ, բայց գերազանցել է արտահանման ծավալները: Ներմուծումը կազմել է 73%, արտահանումը՝ 72.8%: 2022թ. 1-ին եռամսյակում սկսված Ռուս-Ուկրաինական կոնֆլիկտը հիմնովին փոխել է տնտեսական և քաղաքական զարգացումներն ամբողջ աշխարհում և ՀՀ-ն բացառություն չէ: 2023թ. 1-ին կիսամյակը ևս լի է եղել համաշխարհային տնտեսական և քաղաքական ուշագրավ զարգացումներով, որոնք իրենց ազդեցությունն են թողել ՀՀ-ի վրա: Մասնավորապես այն իր ազդեցությունն է ունեցել ռուբլու փոխարժեքի վրա, որը արժեզրկվել է շուրջ 23 տոկոսի չափով, ԱՄՆ դոլարի և Եվրոյի փոխարժեքները հիմնականում պահպանել են իրենց դիրքերը:

Աշխարհաքաղաքական զարգացումները էական դրական ազդեցություն են թողել նաև տնտեսության մի շարք ճյուղերում, որի հիմնական պատճառները ՌԴ նկատմամբ կիրառվող պատժամիջոցներն են՝ իրենց հետևանքներով: ՌԴ քաղաքացիների ներհոսքը ՀՀ ակտիվացրել է տնտեսության մի շարք ուղղություններ, ինչպիսիք են անշարժ գույքի շուկան, ծառայությունների, հյուրանոցային, սպասարկման ոլորտները և այլն:

Ներկայացված զարգացումներից անմասն չի մնացել նաև ֆինանսաբանկային ոլորտը: ՌԴ դեմ կիրառվող պատժամիջոցների արդյունքում ԱՄՆ և Եվրոպական գործընկեր կառույցները խստացրել են ՀՀ բանկերի կողմից կատարվող գործարքների նկատմամբ պահանջները, այդ թվում՝ սահմանափակելով նոր հաճախորդների համար բացվող հաշիվների, ԱՄՆ դոլարով միջազգային փոխանցումների գործարքները և այլն: Որոշ ֆինանսական կառույցներ, որոնք ծառայություններ են մատուցում ֆիզիկական անձանց սպասարկման և մանրածախ շուկաներում, գրանցել են ոչ տոկոսային եկամուտների զգալի աճ՝ պայմանավորված հիմնականում ոչ ռեզիդենտներին մատուցվող ծառայություններով:

Միաժամանակ, 2023թ-ին ՀՀ ԿԲ Խորհուրդը նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով այն 10.25%: Գործընկեր երկրների կենտրոնական բանկերն առաջիկայում կշարունակեն վարել զսպող դրամավարկային քաղաքականություն: Ֆինանսական խիստ պայմանների ներքո միջազգային ապրանքահումքային շուկաներում գները նվազում են: Արդյունքում՝ արտաքին հատվածից ՀՀ տնտեսության վրա գնաճային ազդեցությունները շարունակում են թուլանալ: 2023թ. 2-րդ եռամսյակում ՀՀ-ում արձանագրվել է սպասվածից բարձր տնտեսական ակտիվություն, որին շարունակել են նպաստել շինարարության և ծառայությունների ոլորտներում արձանագրված բարձր աճերը:

2023թ. հունիսին 12-ամսյա գնաճը շարունակել է արագորեն նվազել և կազմել է -0.5%:

12-ամսյա բնականոն գնաճը նույնպես զգալիորեն դանդաղել է՝ կազմելով 1.5%:

Արտաքին հատվածից գնաճային ազդեցության էական թուլացման, իրականացված զսպող դրամավարկային քաղաքականության և դրամի արժևորման արդյունքում գնաճային միջավայրը ՀՀ-ում շարունակում է արագ տեմպով մեղմվել:

Բացի ներկայացված գործոններից, ՀՀ-ում տնտեսական ակտիվությունը պայմանավորված է եղել նաև ներքին պահանջարկով և մակրոտնտեսական դրական արդյունքներ գրանցվել են 2023թ-ին ՀՀ Կառավարության կողմից տնտեսական և սոցիալական ոլորտներում իրականացված շարունակական աջակցության շնորհիվ:

2023թ. 1-ին կիսամյակում ՀՀ բանկային համակարգի արձանագրած ցուցանիշները վկայում են, որ առևտրային բանկերը հիմնականում գրանցել են դրական արդյունքներ, ինչպես շահույթի, այնպես էլ բանկերի գործունեությունը բնութագրող մյուս հիմնական ցուցանիշների մասով:

Բանկի զուտ շահույթը կազմել է 2.12 մլրդ ՀՀ դրամ: Գործող 18 առևտրային բանկերի թվում Բանկը շահույթի մեծությամբ զբաղեցրել է 15-րդ տեղը և գեներացրել է Բանկային համակարգի ընդհանուր շահույթի շուրջ 1.50%-ը:

ROA և ROE ցուցանիշներով Բանկային համակարգում Բանկը զբաղեցրել է համապատասխանաբար 17-րդ և 16-րդ տեղերը (հիմք՝ Արմինֆո գործակալության 16.08.2023թ-ի թիվ 115 կիսամյակային վերլուծական): Միաժամանակ, 2023թ. 1-ին կիսամյակի գործունեության արդյունքներով մեկ աշխատողին բաժին ընկնող հասույթի ցուցանիշի գծով Բանկը համակարգում գտնվում է վեցերորդ տեղում, իսկ զուտ շահույթի ցուցանիշի գծով՝ առաջին տեղում:

Բանկի Խորհուրդի, կառավարման մարմինների, աշխատակիցների ջանքերի և հաճախորդներին միտված մոտեցումների շնորհիվ հնարավոր է դարձել պահպանել Բանկի պրոդուկտների մրցակցային պայմանները և ներգրավել նոր հաճախորդներ: Հաճախորդների հետ մեր ամենօրյա աշխատանքը բերել է առաջանցիկ կերպով պրոդուկտների պայմանների պարբերաբար վերանայումների, հնարավոր մատչելի ֆինանսական ռեսուրսների ներգրավմանը և նոր պրոդուկտների մշակմանը՝ առավելագույնս բավարարելով նրանց պահանջմունքները:

Բանկը շարունակել և խորացրել է մի շարք առաջատար միջազգային և տեղական ֆինանսական կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցությունը, մասնավորապես՝ «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ»-ի, «Ասիական Զարգացման Բանկ»-ի, «Եվրասիական Զարգացման Բանկ»-ի, «Տնտեսական Համագործակցության Միջազգային Բանկ»-ի, FCI միջազգային ֆակտորինգային ընկերության, Եվրոպական ներդրումային բանկի, «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի, «Գերմանահայկական հիմնադրամ» ԾԿԳ Հիմնարկի, «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ների ու այլ կազմակերպությունների հետ: Մասնավորապես.

• ՎԶԵԲ-ի հետ համատեղ համագործակցության շրջանակում շարունակվել է ՓՄՁ և GCF-GEFF Armenia էներգաարդյունավետության ծրագրերի շրջանակներում ընդհանուր 8 մլն ԱՄՆ դոլար ծավալով ներգրավված միջոցների տեղաբաշխումը, ինչպես նաև համագործակցությունը 28.5 մլն ԱՄՆ դոլար ԱՖԾ-ի սահմանաչափի շրջանակում, որը ՀՀ բանկային համակարգում ամենամեծ սահմանաչափերից է: Հատկանշական է նաև, որ 2023թ. մայիսի 16-18-ը Սամարղանդում (Ուզբեկստան) կայացած ՎԶԵԲ-ի տարեկան ժողովի շրջանակում Առևտրի ֆինանսավորման ծրագրի (TFP) ոլորտում նախորդ տարվա ցուցանիշների արդյունքներից ելնելով՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն արժանացել է «2022թ-ի Ամենաակտիվ թողարկող բանկը Հայաստանում» և «Տարվա առևտրի ֆինանսավորման գործարք» մրցանակներին:

• Բանկն ԱԶԲ-ի հետ շարունակել է համագործակցել Առևտրի ֆինանսավորման

ծրագրի (ԱՖԾ) շրջանակում 9 մլն ԱՄՆ դոլարի սահմանաչափի շրջանակում: Համագործակցության ընթացքում երկու տարի անընդմեջ արժանացել է Ասիական զարգացման Բանկի կողմից ԱՖԾ մրցանակների՝ «Առաջատար գործընկեր-բանկ Հայաստանում» և «Լավագույն ՓՄՁ գործարք-Թողարկող Բանկ»: 2022թ-ին ԱԶԲ-ի հետ համատեղ մշակվել է նաև Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման ուղեցույցը:

• Բանկը շարունակել է համագործակցությունը ԳՀՀ-ի հետ մի շարք ուղղություններով, մասնավորապես, «ՄՓՄՁ Աջակցում» վարկային ծրագիր, KfW բանկի վարկային վերականգնվող էներգիայի զարգացման ծրագիր, ՓՄՁ-ների էներգաարդյունավետ ներդրումների ծրագիր, ԵՆԲ-ի «Մասնավոր հատվածի ֆինանսավորում ՓՄՁ-ների և միջին կապիտալիզացիայի կազմակերպությունների համար» ծրագիր և այլն:

• Եվրասիական Զարգացման Բանկի (ԵԱԶԲ) հետ Բանկը համագործակցում է Առևտրի ֆինանսավորման խթանման նպատակով 5 մլն ԱՄՆ դոլար սահմանաչափով վարկային պայմանագրի շրջանակում:

• Տնտեսական Համագործակցության Միջազգային Բանկի (ՏՀՄԲ) հետ համագործակցությունը շարունկավում է 5 մլն եվրո սահմանաչափով Ֆինանսավորման գլխավոր համաձայնագրի շրջանակում:

• Հիփոթեքային վարկավորման շրջանակում Բանկը հաջողությամբ շարունակել է համագործակցել «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ների ծրագրերի հետ: 2022թ-ին Բանկը միացել է նաև հետևյալ ծրագրերին՝ «Բնակարանային ֆինանսավորում - V» ծրագիր (ԱՀԸ-ի կողմից վերաֆինասնավորվող բնակարանային էներգաարդյունավետ վարկեր) և «Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագիր»: 2023թ. 1-ին կիսամյակում աշխատանքներ են տարվել «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի շրջանակներում իրականացվող «Սպայական եվ ավագ ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը կամ բնակելի տան կառուցմանը պետական աջակցության նպատակային ծրագրին» մասնակցելու մասով, որին մասնակցությունն արդեն հաստատվել է և առաջիկայում մեկնարկելու է տվյալ ծրագրի շրջանակներում վարկավորումը:

• Բանկն արտահանման ֆինանսավորման շրջանակներում շարունակում է համագործակցել ՀԱԱԳ-ի հետ՝ իրականացնելով նրա հավաստագրի ապահովությամբ նախաարտահանման և հետարտահանման վարկավորում:

• Բանկը 2023թ. 1-ին կիսամյակում հավատարմագրման (ակրեդիտացման) գործընթացի շրջանակներում շարունակել է համագործակցությունը միջազգային Green Climate Fund կազմակերպության հետ: Green Climate Fund-ի կողմից ակրեդիտացվելու դեպքում Բանկը հնարավորություն կունենա ներգրավել շուկայականից մատչելի և երկարաժամկետ ֆինանսական միջոցներ, ինչպես նաև հնարավորություն կընձեռնվի միջնորդ հանդիսանալ ֆոնդի և ՀՀ ներդրողների միջև:

• Բանկը 2022թ-ին ակտիվացրել է Money Send ծառայությունը, որը MasterCard Worldwide վճարային համակարգի ծառայություն է: Այն հնարավորություն կընձեռնի Բանկի հաճախորդներին կատարել դրամական փոխանցումներ աշխարհի ցակացած բանկի կողմից թողարկված Mastercard և Maestro քարտերի միջև, եթե թողարկող բանկի կողմից չկան սահմանված այլ բացառություններ/սահմանափակումներ: Ծառայությունից հնարավոր է օգտվել ինտերնետ-բանկ և մոբայլ-բանկ համակարգերի միջոցով:

2023թ. 1-ին կիսամյակում շարունակվել են աշխատանքները և նախատեսվում է մինչ

տարվա ավարտ հաճախորդներին առաջարկել պրեմիում դասի Master Card World Elite քարտատեսակ, ինչը քարտապանին կտա մի շարք առավելություններ, մասնավորապես՝ Լաունջ, Կոնսիերժ, Ֆասթ թրեք ծառայություններ, ինչպես նաև ճամփորդական ապահովագրություն:

• Բանկը շարունակել է իր ակտիվ մասնակցությունը Պետության կողմից իրականացվող տնտեսության արդիականացման և գյուղատնտեսության ոլորտի աջակցության ծրագրերին: Մասնավորապես Բանկը ակտիվորեն մասնակցել և մասնակցում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող գյուղատնտեսական հումքի մթերումների, տնտեսության արդիականացման և ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի պետական աջակցության ծրագրին:

• Բանկը շարունակել է իր ներդրումային գործունեությունը պետական և կորպորատիվ արժեթղթերի շուկայում և հանդես եկել որպես գործընկեր ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների կողմից թողարկվող արժեթղթերի մարքեթ-մեյքեր:

• Բանկն առանձնակի ուշադրություն է դարձրել ֆինանսական շուկայում բանկերի, վարկային կազմակերպությունների, կենսաթոշակային ակտիվների կառավարիչների, ապահովագրական ու ներդրումային ընկերությունների համար որպես միջնորդ օղակ ծառայությունների մատուցմանը՝ առաջարկելով նրանց ծառայություններ ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ միջազգային ֆինանսական շուկաներում՝ հնարավորություն ընձեռելով ներդրումներ կատարելու տարբեր ֆինանսական գործիքներում:

Այս ամենը հնարավորություն կտա Բանկին՝ իրականացնել իր միջնաժամկետ ծրագրային նպատակները:

ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

/ 30.06.23թ. դրությամբ/

Ցուցանիշ	Մեծություն /հազ. ՀՀ դրամով/	Տոկոսային փոփոխությունը 31.12.2022թ. համեմատությամբ
Ընդհանուր ակտիվներ	410,651,501	6.62%
Ընդհանուր պարտավորություններ	350,212,672	4.72%
Ընդհանուր կապիտալ	60,438,829	19.13%
Կանոնադրական կապիտալ	16,205,748	0.00%
Չբաշխված շահույթ	13,406,266	-19.99%

ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԿՏԻՎՆԵՐ

2023թ. 1-ին կիսամյակի վերջի դրությամբ Բանկի ակտիվները 2022թ. վերջի համեմատությամբ ավելացել են մոտ 25,5 մլրդ ՀՀ դրամով (6.6%-ով)՝ կազմելով շուրջ 410,7 մլրդ ՀՀ դրամ:

Բանկի վերջին երեք տարիների ընթացքում ակտիվների աճի տեմպի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վերջինիս կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվությունն արտացոլված է ներքոնշյալ աղյուսակում:

ԱՆՎԱՆՈՒՄ	31/12/2020	31/12/2021	31/12/2022	30/06/2023
ԱԿՏԻՎՆԵՐ	386,139,335	398,420,438	385,172,182	410,651,501
Կանխիկ դրամական միջոցներ	1,951,867	1,895,416	2,947,963	2,417,951
Պահանջներ բանկերի նկատմամբ	28,573,237	25,937,477	25,995,590	32,513,388
Պահանջներ այլ ֆինանսական հաստատությունների նկատմամբ	4,106,658	2,096,690	7,080,975	7,651,027
Բանկին պատկանող արժեթղթեր	140,849,679	153,851,984	133,432,483	150,945,434
Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր	80,530,321	89,923,037	78,718,547	69,005,456
Ռեպո համաձայնագրեր	130,094	188,950	179,687	350,098
Վարկեր	124,845,701	120,951,696	124,400,646	133,679,049
Ֆինանսական վարձակալություն	1,669,336	2,096,193	4,107,822	4,723,480
Ֆակտորինգ	3,089,349	2,230,538	2,587,504	2,549,792
Հիմնական միջոցներ	2,642,279	2,636,017	2,646,539	2,613,723
Ոչ նյութական ակտիվներ	197,243	201,056	223,457	250,642
Այլ ակտիվներ	4,564,402	5,597,939	5,735,735	6,894,184
Պահուստներ	-6,497,082	-9,588,875	-6,876,699	-5,153,408
Ամորտիզացիա	-996,146	-1,120,957	-767,518	-1,241,162

Բանկի ակտիվների կազմում գերակշռող մասը կազմում են արժեթղթերը և վարկային պորտֆելը՝ համապատասխանաբար 53.6% և 34.4%:

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

2023թ. 1-ին կիսամյակի վերջի դրությամբ վարկային պորտֆելի գումարային մեծությունը կազմել է մոտ 141,3 մլրդ ՀՀ դրամ (այդ թվում՝ ֆակտորինգ, ֆինանսական վարձակալություն), որը 2022թ-ի վերջի համեմատ աճել է մոտ 10,0 մլրդ ՀՀ դրամով կամ 7.6%-ով:

ԲԱՆԿԻ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊՈՐՏՖԵԼ

2023թ. 1-ին կիսամյակի վերջի դրությամբ Բանկի արժեթղթերի մնացորդը կազմել է մոտ 220,0 մլրդ ՀՀ դրամ, որը 2022թ-ի վերջի համեմատ աճել է 7.8 մլրդ ՀՀ դրամով կամ 3.7%-ով:

2023թ. 1-ին կիսամյակի ընթացքում Բանկի կողմից արժեթղթերով կնքված գործարքների ծավալը կազմել է շուրջ 55,2 մլրդ ՀՀ դրամ, որը 2022թ-ի վերջի դրությամբ համապատասխան ցուցանիշից (131,6 մլրդ ՀՀ դրամ) պակաս է 76,4 մլրդ ՀՀ դրամով կամ 58.1%-ով:

Ընդ որում, պետական պարտատոմսերով կնքված գործարքների ծավալը 2023թ. 1-ին կիսամյակում կազմել է 49,1 մլրդ ՀՀ դրամ, որը կնքված ընդհանուր գործարքների շուրջ 89.0%-ն է:

Կորպորատիվ պարտատոմսերով կնքված գործարքների ծավալը կազմել է 6,1 մլրդ ՀՀ դրամ, որը կնքված ընդհանուր գործարքների շուրջ 11.0%-ն է:

ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ

2015թ-ից 2023թ. 1-ին կիսամյակն ընկած ժամանակահատվածում Բանկն իրականացրել է պարտատոմսերի 18 թողարկումների տեղաբաշխում հետևյալ պայմաններով՝

Աղյուսակ 1. Բանկի կողմից թողարկված, տեղաբաշխված և մարված պարտատոմսերի նկարագիրը 30.06.2023թ. դրությամբ.

	Թողարկման արժույթ	Տեղաբաշխման ծավալ	Ժամկետայնություն	Արժեկտրանային եկամտաբերություն	Մարման ժամկետ	Անվանական արժեք
2015 թվական						
SWISB1	USD	2,000,000	3 տարի	7.50 %	16.04.2018	1,000
SWISB2	USD	3,000,000	4 տարի	8.00 %	16.04.2019	1,000
SWISB3	USD	5,000,000	5 տարի	8.50 %	27.04.2020	1,000
2017 թվական						
SWISB4	USD	10,000,000	7 տարի	6.75%	15.06.2024	100
SWISB5	EUR	10,000,000	6 տարի	5.00%	15.06.2023	100
SWISB6	ՀՀ դրամ	2,000,000,000	4 տարի	12.75%	15.06.2021	50,000

2018 թվական						
SWISB7	ՀՀ դրամ	3,000,000,000	5 տարի	11.50%	24.05.2023	50,000
SWISB8	USD	6,000,000	7 տարի	6.50%	24.05.2025	100
SWISB9	USD	10,000,000	6 տարի	6.00%	22.11.2024	100
2019 թվական						
SWISB7	ՀՀ դրամ	3,000,000,000	5 տարի	11.50%	24.05.2023	50,000
SWISB2A	USD	5,000,000	6 տարի	6.50%	02.05.2025	100
SWISB2B	EUR	3,000,000	4 տարի	4.00%	02.05.2023	100
2020 թվական						
SWISBC	ՀՀ դրամ	10,000,000,000	5 տարի	9.00%	01.06.2025	50,000
SWISBD	USD	10,000,000	6 տարի	6.00%	01.06.2026	100
SWISBE	EUR	10,000,000	5 տարի	3.50%	01.06.2025	100
SWISBF	ՀՀ դրամ	10,000,000,000	6 տարի	8.50%	28.09.2026	50,000
2023 թվական						
SWISBH	ՀՀ դրամ	6,000,000,000	4 տարի	11.75%	01.06.2027	50,000
SWISBI	USD	6,000,000[1]	4 տարի	6.00%	01.06.2027	100
SWISBJ	EUR	8,550,900[2]	4 տարի	4.50%	01.06.2027	100

Բոլոր տեղաբաշխումների արդյունքում Բանկին հաջողվել է հավաքագրել 34,0 մլրդ ՀՀ դրամի, 57,0 մլն ԱՄՆ դոլարի և 31,5 մլն եվրոյի չափով դրամական միջոցներ: 30.06.2023թ. դրությամբ արդեն յոթ թողարկումները մարված են եղել՝ 10 մլն ԱՄՆ դոլար, 13 մլն Եվրո և 8 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով:

Հատկանշական է, որ 2023թ. 1-ին կիսամյակում Բանկի կողմից թողարկված 3 պարտատոմսերի թողարկումներ հաջողությամբ մարվել են և նույն ժամանակահատվածում Բանկը սկսել է իրականացնել պարտատոմսերի 3 թողարկումների տեղաբաշխում, որոնք ավարտվել են 2023թ. 2-րդ կիսամյակում՝ 6 մլրդ ՀՀ դրամ, 6 մլն ԱՄՆ դոլար և 10 մլն Եվրո ծավալով:

2023թ. 1-ին կիսամյակի վերջի դրությամբ Բանկի պարտատոմսերի 8 թողարկումներ գտնվում են շրջանառության մեջ և ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում, իսկ 3 թողարկումներ գտնվում են տեղաբաշխման ընթացում: Միաժամանակ, պարտատոմսերի իրացվելության ապահովման նպատակով Բանկն օգտվում է շուկա ստեղծողի ծառայություններից, ինչն ապահովել է Հայաստանի ֆոնդային բորսայի առևտրային նստաշրջաններում պարտատոմսերի երկկողմանի գնանշումները:

[1] 30.06.2023թ. դրությամբ SWISBI տեղաբաշխման ծավալը կազմել է 4,937,100 ԱՄՆ դոլար:
[2] 30.06.2023թ. դրությամբ SWISBJ տեղաբաշխման ծավալը կազմել է 8,188,900 Եվրո:

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ

2023թ. 1-ին կիսամյակում Բանկը միջբանկային և ներբանկային արտարժութային շուկայում հիմնական փոխարկելի արժույթներով իրականացրել է շուրջ 162,6 մլրդ ՀՀ դրամի առք ու վաճառքի գործառնություններ:

Բանկը միջբանկային և ներբանկային շուկաներում իրականացրել է ավելի քան 441,4 մլն ՀՀ դրամի արտարժութային սվոփ գործառնություններ:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ

2023թ. 1-ի կիսամյակի վերջի դրությամբ Բանկի պարտավորությունները 2022թ-ի վերջի հետ համեմատած աճել են մոտ 15,8 մլրդ ՀՀ դրամով ՝ կազմելով մոտ 350,2 մլրդ ՀՀ դրամ:

Պարտավորությունների ավելացումը հիմնականում պայմանավորված է եղել պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հոդվածի ավելացմամբ:

Ընկերության սեփական կապիտալը աճել է մոտ 9.7 մլրդ ՀՀ դրամով՝ պայմանավորված վերագնահատման պահուստների նվազմամբ:

Ստորև ներկայացված աղյուսակում արտացոլվում են Բանկի պարտավորությունների և կապիտալի աճի դինամիկան վերջին երեք տարիների համար:

Աղյուսակ				հազ ՀՀ դրամ
	2020	2021	2022	30.06.2023
Պարտավորություններ	323,207,050	339,353,492	334,437,260	350,212,672
Կապիտալ	62,932,285	59,066,946	50,734,922	60,438,829

ԿԱՊԻՏԱԼ

2023թ. 1-ին կիսամյակի վերջի դրությամբ Բանկի Ընդհանուր կապիտալը կազմել է 60.4 մլրդ ՀՀ դրամ, որը աճել է 2022թ-ի վերջի ցուցանիշի համեմատ 19.1%-ով: Բանկի կապիտալի աճը պայմանավորված է վերագնահատման պահուստների նվազմամբ:

ՇԱՀՈՒՅԹ

2023թ. 1-ին կիսամյակի վերջի դրությամբ Բանկի զուտ շահույթը կազմել է 2.1 մլրդ ՀՀ դրամ:

2023թ. 1-ին կիսամյակի վերջի դրությամբ Բանկի շահութաբերության ցուցանիշները կազմել են՝
ROE 7.7%
ROA 1.1%:

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ ՀԵՏԱԳԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՋՈՐԴ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Բանկի հետագա զարգացման խնդիրները և նպատակները պայմանավորված են Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով սահմանված նպատակային թիրախներով ու չափանիշներով: Նախատեսվում է 2023 թվականի համար հետևյալ նպատակների իրականացումը.

- Շարունակել ավելացնել վարկային և ֆակտորինգային պորտֆելները՝ հաճախորդներին առաջարկելով կորպորատիվ բանկային ծառայությունների լայն փաթեթ, որը կներառի ինչպես ավանդական, այնպես էլ ոչ ավանդական բանկային ծառայություններ, մասնավորապես՝ վարկեր, վարկային գծեր, հիփոթեքային վարկավորում, օվերդրաֆտ, ֆակտորինգ, լիզինգ, ինչպես նաև առևտրի ֆինանսավորման գործիքներ (ակրեդիտիվ, երաշխիք, գնման պատվերի ֆինանսավորում, արտահանման խթանման ֆինանսավորում և այլն), և հաճախորդների կարիքներից բխող այլ ծառայություններ:
- Բանկի ընդհանուր ակտիվներում ավելացնել վարկային ներդրումների պորտֆելը՝ ի հաշիվ նաև Բանկի արժեթղթերի պորտֆելի նվազեցման, ինչի արդյունքում կապահովվի դիվերսիֆիկացման ավելի բարձր մակարդակ:
- Շարունակել արժեթղթերով իրականացվող ներդրումային գործառնությունների գծով շուկայի մասնակիցներին և ներդրողներին առաջարկել ծառայությունների լայն փաթեթ, որը կներառի բրոքերային, պահառուական ամբողջական ծառայություններ, ինչպես նաև ՀՀ ֆինանսական շուկայում դեռևս լայն տարածում չգտած արտարժութային ածանցյալ գործիքներ՝ սվոպ, ֆորվարդ, ֆյուչերս, օպցիոն և ոսկով գործառնություններ՝ ՀՀ ֆինանսական շուկայում պահպանելով առաջատար դիրք:
- Թողարկող կազմակերպություններին շարունակել առաջարկել անդերրայթինգի և երկրորդային շուկայի իրացվելիության ապահովման համար շուկա ստեղծողի ծառայություններ՝ պահպանելով առաջատար դիրքեր կորպորատիվ արժեթղթերի շուկայում:
- ՀՀ ֆինանսական շուկայում որպես կայուն և վստահելի ֆինանսական գործընկեր՝ բանկերի և ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների համար շարունակել ապահովել միջնորդական գործունեություն:
- Ձեռնարկել ակտիվ միջոցառումներ հաճախորդների սպասարկման որակի և ճկունության բարելավման ուղղությամբ:
- Բանկի պրոդուկտների մրցակցային պայմանների բարձրացման նպատակով շարունակել միջոցների ներգրավման ճկուն քաղաքականության վարումը:
- Բանկի հիմնական գործունեությանը համահունչ շարունակել ներգրավել հաճախորդներ՝ կիրառելով ժամանակակից բիզնես-միջավայրին հարիր մարքեթինգային գործիքներ:
- Ծառայությունների մատուցումը, գործընթացների վերահսկումը և ռիսկերի կառավարման արդյունավետությունը դարձնել էլ ավելի չափելի՝ օգտագոր-ծելով հաշիվների վարման և հաշվետվողականության նոր՝ ավելի խորաց¬ված չափանիշներ:
- Բանկի ոչ տոկոսային եկամուտների ավելացման նպատակով խթանել համաատասխան գործիքների կիրառումը հաճախորդների շրջանում: Արտարժութային գործառնությունների ուղղությամբ արդյունավետ գործընկերային հարաբերությունների ձևավորում, ինչպես նաև

արտարժութային գործառնությունների առաջմղման նպատակով 2023թ-ին Բանկը նախատեսել է բացել առանձին փոխանակման կետ, որը 2023թ.-ի 1-ին կիսամյակում արդեն իսկ սկսել է գործել:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Բանկի կառավարման համակարգը մշտապես գտնվում է Բանկի Խորհրդի և Գործադիր մարմնի ուշադրության կենտրոնում և ելնելով տնտեսական ու մրցակցային միջավայրից, ԿԲ և օրենսդրական պահանջներից, ինչպես նաև Բանկի սեփական կարիքներից այն մշտապես կատարելագործվում է միջազգային բանկային փորձին համահունչ: Խորհուրդը մշտապես կարևորում է արդյունավետ կորպորատիվ կառավարման համակարգի ստեղծումը Բանկում: Բանկն իր կորպորատիվ կառավարման համակարգը կառուցել է «ստուգումների և հակակշիռների» (checks and balances) միջազգայնորեն ընդունված սկզբունքների հիման վրա:

Բանկն առաջնորդվում է միջազգային բանկային պրակտիկայում ընդունված սկզբունքներով՝ ստորաբաժանումների և աշխատակիցների միջև լիազորությունների, պարտականությունների և ֆունկցիաների հստակ տարանջատում, աշխատակիցների փոխարինելիության ապահովում, իրավասությունների պատվիրակման հստակ մեխանիզմների առկայություն, բաժնետիրոջ, Խորհրդի, գործադիր մարմնի, Ներքին և Արտաքին աուդիտորների միջև արդյունավետ համագործակցություն, որոշումների կայացման կոլեգիալության սկզբունք, ռիսկ պարունակող գործողություններում երկու անձի սկզբունքի կիրառում, գործառնությունների և գործողությունների մանրամասն փաստաթղթավորում ու կանոնակարգում, ռիսկերի կառավարման և ներքին հսկողության հստակ մեխանիզմների կիրառում, Բանկի զարգացման, գործարքների ու ծառայությունների ավելացմանը զուգահեռ կառուցվածքի կատարելագործում, հաշվետվողական և տեղեկատվական կայուն համակարգի առկայություն, կորպորատիվ վարքագծի արժեքների արժևորում և այլն:

Բանկի կառավարման համակարգը, նրա կազմակերպական կառուցվածքը մնալու են ճկուն՝ ելնելով արագ արձագանքման սկզբունքից և զարգացման տվյալ փուլում Բանկի առջև ծառացած խնդիրներից:

Բանկը կառավարման համակարգի կատարելագործման համար կարևորելու է ներդրված կորպորատիվ կառավարման սկզբունքների էլ ավելի խորացումը և ամրապնդումը՝ ապահովելով ԿԲ-ի պահանջները և համապատասխանելով միջազգային լավագույն փորձին: Շարունակվելու է Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների ուսումնասիրությունը՝ դրանց աշխատանքների օպտիմալացման, արդյունավետության բարձրացման, բաժինների և աշխատակիցների գործառույթների փոխանցման, իրավասությունների հստակեցման տեսանկյունից: Առավել ուշադրություն է դարձվելու Բանկի համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտների զարգացմանը:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բանկի կողմից կիրառվող ռիսկերի կառավարման մի շարք հիմնարար սկզբունքներ թույլ են տալիս արդյունավետ կառավարել ռիսկերը: Դրանք են՝ ներդրումային որոշումների ընդունման կոլեգիալ եղանակը, ռիսկերի բացահայտման, վերլուծության և գնահատման համար ռիսկերի կառավարման մոդելների ու տարրերի կիրառումը,

աշխատատեղերում իրավասությունների և պարտականությունների տարանջատումը, գործառնությունների իրականացումը առնվազն «երկու անձի» սկզբունքով, ռիսկային գործառնությունների համար սահմանաչափերի որոշումն ու հետևումը, ռիսկային ակտիվների դիվերսիֆիկացիան, հնարավոր կորուստների ծածկման համար պահուստների ձևավորումը, ռիսկի փոխանցումը երրորդ անձանց՝ ապահովագրության միջոցով, երբ դրանց նվազեցման օգուտները գերազանցում են գնահատված ծախսերը կամ դրանց նվազեցումը գործնականորեն անհնար է և այլն:

Բանկում ներդրվել և գործում է սթրես-թեստավորման համակարգ, մշակվել են տարբեր հավանական սցենարներ, որոնցով Բանկը թեստավորում է տարբեր իրավիճակների ազդեցությունը Բանկի շահույթի և հիմնական տնտեսական նորմատիվների վրա:

Գործառնական ռիսկի նվազեցման նպատակով Բանկում գործում է ապահովագրության փաթեթ, որն իր մեջ ներառում է բանկային ռիսկերի համապարփակ, էլեկտրոնային ու համակարգչային հանցագործության և մասնագիտական պատասխանատվության բաժինները: Բանկի կողմից ձեռք է բերվում նաև շենքի և գույքի ապահովագրություն:

Բանկի ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման ստորաբաժանումն անկախ է գործարքներն իրականացնող ստորաբաժանումներից: Վերջինիս մեջ մտնող բաժինները կառավարում են բանկային գործունեությանը վերաբերող տարբեր ռիսկեր: Ընդհանուր ռիսկերի կառավարման բաժինը, որն ապահովում է բանկի ներքին հաշվետվողականությունը և ցուցանիշների վերլուծությունը, վերահսկում է հիմնական տնտեսական նորմատիվները, ներկայացնում է ուղենիշների առաջարկներ, վերահսկում է Խորհրդի ու Տնօրինության կողմից հաստատված սահմանաչափերը և իրականացնում է այլ գործառույթներ:

Վարկային ռիսկի կառավարման բաժինն իրականացնում է Վարկային կոմիտեի քննարկմանը ներկայացվող վարկային փաթեթների անկախ գնահատում, վարկային կոմիտեի կողմից սահմանված պայմանների վերահսկողություն, ֆինանսական, գործառնական և արտապլանային մոնիթորինգներ:

Համապատասխանության ապահովման պատասխանատուն ապահովում է Բանկում գործող իրավական ակտերի և աշխատակիցների գործողությունների համապատասխանությունը գործող օրենսդրությանն ու իրավական ակտերին: Ներքին դիտարկումների մարմինն իրականացնում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի գործառույթ:

Ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողությունը Բանկում իրականացնում են Գործադիր տնօրենը և կորպորատիվ կառավարման սկզբունքների հիման վրա ստեղծված կոլեգիալ մարմինները՝ Տնօրինություն, Ներդրումային, Վարկային, Գործունեության համապատասխանության հսկման և Ակտիվների ու պասիվների կառավարման կոմիտեները:

ԲԱՆԿԻ ԲՆԱԿԱՆՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Բանկի գործունեության հետ կապված հիմնական ռիսկերը ներկայացված են ստորև:

Վարկային ռիսկն առաջանում է բանկի փոխառուների կամ գործընկերների կողմից իրենց պայմանագրային պարտավորությունների չկատարման հետևանքով: Բանկը հաճախորդների հետ կապված ռիսկերը կառավարում/զսպում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացման միջոցով, կիրառում է վարկային սահմանաչափեր, ինչպես նաև

իրականացնում է ֆինանսական գործունեության վերլուծություն՝ հնարավոր ռիսկերը վաղ շրջանում բացահայտելու ու համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:

Իրացվելիության ռիսկը կապված է հաճախորդների կամ գործընկերների հետ կապված պարտավորությունները Բանկի կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարման անկարողության հետ: Բարձր իրացվելի ակտիվների բարձր տեսակարար կշիռը թույլ է տալիս բանկին հնարավորինս զսպել այս ռիսկը:

Տոկոսադրույքի ռիսկը սպասվող դրամական հոսքերի փոփոխության և դրա հետևանքով բանկի զուտ տոկոսային եկամտի նվազման ռիսկն է, ինչպես նաև տոկոսադրույքների աճի հետևանքով արժեթղթերի պորտֆելի արժեքի նվազման ռիսկը:

Արտարժութային ռիսկը բանկի արտարժութային ակտիվների և պարտավորությունների միջև անհամապատասխանությունից առաջացող ռիսկն է, որի համար Բանկը սահմանել է ԿԲ նորմատիվ ակտերով սահմանված չափանիշներից խիստ չափանիշներ: Այնուամենայնիվ, դրամի արժեզրկումը կարող է հանգեցնել արտարժութային վարկերի սպասարկման վատթարացմանը և հանգեցնել ֆինանսական կորուստների:

Արտաքին ռիսկերը այն ռիսկերն են, որոնց վրա Բանկը չունի կամ գրեթե չունի ազդելու հնարավորություն: ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը և բանկային ոլորտում հնարավոր փոփոխությունները կարող են բացասաբար ազդել Բանկի ֆինանսական արդյունքների վրա: Աշխարհաքաղաքական և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունները ևս կարող են առաջ բերել այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ երկրի ընդհանուր տնտեսական վիճակի վրա, կարող են բերել տնտեսական ակտիվության և բնակչության եկամուտների նվազման, որն էլ բացասաբար կանդրադառնա Բանկի կողմից վարկավորվող տնտեսության բոլոր ճյուղերի վրա:

Բանկային գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման կարգավորման ենթակա գործունեություն է: Բանկային գործունեության ոլորտում պետական կարգավորման նպատակը հանդիսանում է ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունը, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և բանկային ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Բանկի գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա:

ՀՀ-ում բանկային ծառայությունների շուկան խիստ մրցակցային է, շուկայում գործում են նաև արտերկրի բանկերի դուստր կառույցները, որոնք ունեն հզոր ֆինանսական կարողություններ և անկայուն իրավիճակներում ֆինանսական ներարկումներ ստանալու մեծ հնարավորություններ, բանկային առաջավոր և փորձարկված տեխնոլոգիաներ, որի շնորհիվ նրանք ունեն պոտենցիալ առավելություններ ստանալու հավակնություն: Բանկն, իր մրցակցային դիրքերն ամրապնդելու առումով, հետևողականորեն առաջնորդվում է կորպորատիվ կառավարման սկզբունքներով, իրականացնում է իր կառավարման համակարգի ինստիտուցիոնալ համակարգված բարեփոխումներ, ներդնում է բանկային ինովացիոն առաջավոր տեխնոլոգիաներ, բարձրացնում է ծառայությունների սպասարկման որակը և մատչելիությունը:

ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Բանկում գործող ներքին հսկողության համակարգը բոլոր ռիսկային գործառնությունների համար նախատեսում է կրկնակի ստուգում և հաստատում մեկ այլ աշխատակցի կողմից:

Բանկի գործունեության և աշխատակիցների գործառույթների իրականացման ճշտության և կանոնակարգիչ ակտերին համապատասխանության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Բանկի ներքին հսկողական երեք օղակների՝ Ռիսկերի կառավարման, Համապատասխանության ապահովման և Ներքին աուդիտի ստորաբաժանումների միջոցով: Ռիսկերի կառավարման ստորաբաժանումն ամենօրյա հսկողություն է իրականացնում ֆինանսական ռիսկեր պարունակող գործառնությունների նկատմամբ: Համապատասխանության ապահովման բաժինն իրականացնում է Բանկի համապատասխանության ռիսկի բացահայտում, կառավարում և մոնիթորինգ: Միևնույն ժամանակ, Խորհրդի կողմից հաստատված աշխատանքային ծրագրերի համաձայն Բանկի Ներքին աուդիտի ստորաբաժանումն իրականացնում է Բանկի գործունեության առավել ռիսկային ոլորտների ստուգում: Համակարգի արդյունավետությունն ապահովվում է ստորաբաժանումների միջև իրավասությունների և պարտականությունների հստակ տարանջատման և փաստաթղթավորման առկայության, ինչպես նաև համադրումների կիրառման շնորհիվ:

2023թ. 1-ին կիսամյակի ընթացքում Բանկի Ներքին աուդիտի ստորաբաժանումը իրականացրել է Բանկի գործունեության համակողմանի գնահատում՝ ռիսկայնության վրա հիմնված աուդիտի սկզբունքներին համապատասխան, ուշադրություն է դարձվել Բանկում ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանների ապահովմանը, առաջարկների հիման վրա կատարվել են համապատասխան փոփոխություններ:

2023թ. 1-ին կիսամյակում Բանկում շարունակել է իր ակտիվ գործունեությունը Խորհրդին կից ձևավորված Աուդիտ կոմիտեն, որի հիմնական առաքելությունն է Բանկում ներքին աուդիտի դերի, այդ թվում՝ ներքին աուդիտ-խորհուրդ կապի, ինչպես նաև ռիսկերի կառավարման գործառույթի արդյունավետության բարձրացումը:

2023թ. 1-ին կիսամյակի ընթացքում Համապատասխանության ապահովման պատասխանատուի կողմից շարունակվել է իրականացվել Բանկի Տնօրինության կողմից հաստատված տարեկան աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքները, որոնց նպատակն է նպաստել Բանկում համապատասխանության ապահովման մշակույթի կիրառմանը և կատարելագործմանը: Իր առջև դրված նպատակին հասնելու համար Համապատասխանության ապահովման բաժնի կողմից ստուգումների միջոցով իրականացվում է Բանկի համապատասխանության ռիսկի բացահայտում, կառավարում և մոնիթորինգ:

2023թ. 1-ին կիսամյակի ընթացքում Ներքին Դիտարկումների մարմնի կողմից իրականացվել են Բանկի Խորհրդի կողմից հաստատված տարեկան աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքները, որոնք ուղղված են Բանկում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջոցառումների իրականացմանը և գործող միջազգային պատժամիջոցների պահանջների պահպանմանը:

ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անձնակազմի կառավարման քաղաքականության կարևորագույն ուղղություններից է հանդիսանում Բանկում իրականացվող գործընթացների օպտիմալացումը՝ կադրային ներուժի բացահայտման և իրականացվող գործառույթների վերաբաշխման միջոցով: Բանկը շարունակելու է աշխատակիցների ռոտացիայի կիրառումը տարբեր ստորաբաժանումների միջև՝ նպաստելով կադրերի բազմակողմանի զարգացմանը: Բանկը ձգտում է ապահովել աշխատակիցների փոխադարձ փոխարինելիությունը՝ միաժամանակ կարևորելով յուրաքանչյուր աշխատակցի կատարած աշխատանքը:

Նպատակ ունենալով խրախուսել առավել աչքի ընկած աշխատակիցներին՝ կշարունակվի գործող Հանձնաժողովի կողմից բոլոր աշխատակիցների հետ իրենց կատարած աշխատանքի քննարկման և գնահատման կազմակերպման գործընթացը:

Բանկը, ուշադրություն դարձնելով անձնակազմի վերապատրաստմանը, նոր տեխնոլոգիաների, ինստիտուցիոնալ գործընկերների հետ համագործակցության ուղիների ուսումնասիրմանն ու այլ ուղղություններին, 2023թ-ին կշարունակի վերապատրաստման դասընթացների կազմակերպումը:

Բանկն աշխատանքներ է իրականացնում նաև նոր աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության, նրանց ուղղորդման ճիշտ համակարգի ձևավորման ուղղությամբ, այդ թվում նաև՝ փորձառու աշխատակիցների կողմից Բանկում ներքին սեմինարների անցկացմամբ: 2023թ-ին ևս իրականացվելու է աշխատակիցների կողմից տարբեր արդիական թեմաներով ներքին սեմինարները, պրեզենտացիաները և քննարկումները, ինչը կնպաստի աշխատակիցների միջև մասնագիտական գիտելիքների փոխանակմանը, վերլուծական ներուժի բացահայտմանը և զարգացմանը, ինչպես նաև թիմային աշխատանքների ամրապնդմանը:

Նոր աշխատակիցների հնարավորինս շուտ ադապտացումը և թիմային ինտեգրումը հանդիսանում է Բանկի անձնակազմի կառավարման կարևորագույն ուղղություններից մեկը:

Որոշ գործընթացների կանոնակարգման համար Բանկում ստեղծվել են աշխատանքային խմբեր:

Կադրային ռեզերվ ստեղծելու նպատակով Բանկը համագործակցում է որոշ ԲՈՒՀ-երի և հետԲՈՒՀ-ական ուսումնական կենտրոնների հետ:

2023թ-ին Բանկը շարունակելու է աշխատակիցների համար գործող առողջության ապահովագրության ծրագիրը:

Աշխատակիցները կխրախուսվեն ամուսնության, երեխա ունենալու կապակցությամբ, պարբերաբար կկազմակերպվեն կորպորատիվ միջոցառումներ՝ երեկույթներ, քաղաքից դուրս արշավներ և այլն:

Այս ամենը կնպաստի աշխատակիցների միջև միջանձնային հարաբերությունների ամրապնդմանը՝ ձևավորելով համագործակցության և փոխադարձ հարգանքի մթնոլորտ ու թիմային առողջ ոգի:

Մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացն ուղղակիորեն կախված է շուկայի իրավիճակից, և կարող է փոփոխություններ կրել՝ ելնելով Բանկի գործառույթներից և ծանրաբեռնվածությունից: